600.0406.01.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 նոյեմբերի 2019 թվականի №406Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №359Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №685Ա ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի №354Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի №169Ն և 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումները, հաշվի առնելով «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 3-ի №MH/L180767/1.0/RY գրությունը և «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունները մեկ միասնական թույլտվության մեջ միավորելու նպատակահարմարությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 29-ի «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №359Ա որոշմամբ «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման №0046 թույլտվության գործողության ժամկետը՝ որոշման 1-ին կետում «մինչև 2019 թվականի նոյեմբերի 4-ը» բառերը փոխարինելով «մինչև 2029 թվականի նոյեմբերի 4-ը» բառերով, որոշման 1-ին և 2-րդ կետերում «1710-1720ՄՀց/1805-1815ՄՀց» թվերը փոխարինելով

«1710-1726,6ՄՀց/1805-1821,6ՄՀց» թվերով, իսկ որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

   1) 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №685Ա որոշումը.

   2) 2017 թվականի օգոստոսի 16-ի «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №354Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս.ԱՂԻՆՅԱՆ**

ք.Երևան
1 նոյեմբերի 2019թ.